

**ԹՈՒՂԹ ՂԱԶԱՐԱՅ ՓԱՐՊԵՏԻՈՅ ՄԵՂԱԴՐՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԲՍ
ԱԲԵՂԱՅԻՑ ՅԱՌԱԶԱԲԱՆ ԹՂԹՈՅՍ¹ ԱՌԱՔԵԱԼ ՅԱՄԻԹ²
ՔԱՂԱՔԷ**

Լուսաւորէ միշտ շնորհի աստուածային զսիրողս արդարութեան եւ մանաւանդ զայնոսիկ, որ աստուածային բանին պարապեցին բնութեան. քանզի ուսան ի Քրիստոսէ որ ասէ. *Քննեցէ՛ք զգիրս^ա: 2 Չի շահ մեծ անձանց համարելով զերկնաւոր բանս, միշտ կիրթ ունելով զնոյնս³, զի թեւաւորեսցեն զոգիս իւրեանց եւ զլսողացն՝ այնպիսի մասանց առաքինութեան. քանզի պատճառ զարութեան եւ իմաստութեան ընկալան, ուսեալ ի մարգարէէն. *Որ հանէ զպատուականն յանարգէ՝ բերան իմ եղիցի^բ: 3* Քանզի բան ճշմարիտ, արդար եւ արինաւոր ի խրատաբանութիւն ժողովրդոց՝ ծաղկեալ պտղաբերէ զոգիս լսողացն երկնաւոր լուսովն: *4* Սոքա զաւրէն վաճառականաց ընդ ծով եւ ընդ ցամաք աշխատասիրեալք՝ վասն յոյով առնելոյ զխորհուրդս մտացն անապական երկնաւոր գանձուն, տալ որոց ինչորէ ի նոցանէ զբանն աստուածային ի գիւտս փրկութեան անձին:*

5 Յորոց մի յայսպիսեացս երանելին Ղազար, նախանձաւոր եւ աշխատասեր այսպիսի երկնաւոր արուեստի, անդստին ի մանկական տիոցն սկիզբն արարեալ բանական գիտութեան՝ Յունաց յաշխարհն⁴ ճանապարհորդէր, եւ անդ քաջաց եւ առաքինի մարդոց պարապեալ՝ լիով զմարգարիտն, զբանն աստուածային, ընկալեալ յինքեան՝ եկեալ հասաներ յիւր աշխարհն:

6 Եւ քանզի սովորեաց մարդկայինս բնութիւն, զի⁵ իմաստունքն եւ մեծամեծքն գնեն ի վաճառականաց զմարգարիտն եւ զպատուականս հանդերձիցն, զի երեւելիք եւ պայծառք⁶ երեւեսցին ամենայն մարդկան յերեւելիսս՝ ⁷սոյնպէս եւ զսորա զգիտութիւն բանի լուեալ իմաստուն եւ գիտուն⁸

1 *Ձ. ունի վերնագիր.* «Ղազարու վարդապետի փարպեցոյ աշակերտի աղանայ վարդապետի առ վահան տերն մամիկոնէից մեղադրութիւն ստախոս արեղայից»: - *Վ. չունի ամբողջ Յառաջաբանը*

2 *Ձ. ի համիթ*

ա Յովի. Ե 39

3 *ՁԱտ. զնոյնսն*

բ Երեմ. ԺԵ 19

4 *Ձ. աշխարհն*

5 *ՁԱտ. չիք զի*

6 *Ձ. պայծառ*

7 *ԲԳտ. սոյնպէս եւ սորա գիտութիւն բանի. լուեալ...*

8 *Ձ. ի գիտուն*